



# ԽԱՐԿԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3 -ին. Թիֆլիս. №49  
ՌՈՒՍ ՎԱՐՍԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԷՅ



ՊԵՏԵՐՍԻՆ

(Թարգմանակ անգլիական ամսագրից կապուցի ղեկի և ուր  
բանակը գործնել չորս թղթանոթի ղեկանը ժողովուրդը իրա  
յուզան է սուրանան հուսայի սաթի.) Լեպրանդեր

—Այլևս, բիւս մեղքներս ղալիս էք, թէ չէ մենք պակաս ենք ղինւած. մեր թղթանոթները... տեսէք



ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1912 թ.

«ԽԱԹԱՐԱԼԱՅԻ»

Բ Ա Ժ Ա Ն Ե Գ Ր Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

VI Տարի

# ԽԱԹԱՐԱԼԱՅԻ

VI Տարի

Նրդիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթամթերթի  
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ՝ԱՄԵՆ՝ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆՆ՝

Պայտեմական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Աճեցածես բերք բոլոր բնագիծների համար

«ԽԱԹԱՐԱԼԱՅԻ» շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի:  
Հասցէն՝ Тифлиς, редакция «ХАТАБАЛА»:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»  
Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Նրիցեան

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր:

«ԽԱԹԱՐԱԼԱՅԻ» ՕՐԱՑԱԲՅՈՂ

1911 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 օր

# 3

Суббота ԶԱՐԱԹ Ծաղատո  
Լուսնի 11

1 (կիր.) Տօնակատարութիւն քնթաթողութեան և հանգիստ հայնոյաբանութեան ի գիշերն ուղեորութիւն դէպի ս. էջմիածին:

2 (բ. շ.) Յիշատակ գալստեան Բաթում քաղաքի պատգամաւորաց հայոց ի թիւրքիոյ և անդ խօսելոյ վասն ազգաշինութեան և զրպանազրատութեան:

3 (գ. շ.) Տօն սրբոցն նահատակելոցն և խայտառակելոցն:

4 (դ. շ.) Պահք ի յէջմիածին միայն պատկարելի է ուտել, իսկ ժողովուրդն հայոց պարտ է պահքը չլուծել:

5 (ե. շ.) Շարժադրած շորերարեր գալստեան գ... պետին հայոց Գուրբոյինի—Պուրիշկիւիէ զՏէր Միհրդատա Հայկազի գղտնիկօք իւրօվք:

6 (ուրբ.) Անւանակելութիւն սրբոյն Ձիֆթէ-Սաքաֆի, Ձիխտի Կոպէի, և այլոց մարտիրոսաց:

Աստղ. ասմար. և օրացոյցագէտ  
Աղբրիօսու էճէնդի

Բ Ա Ց Ի Ա Ծ Է

# ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1912 թ.

ԲՆՅՈՒՄ ԵՆՔ  
1912 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Առաջիկայ 1912 թւի համար «Սաթարալան» նորից բացում է իր բաժանորդագրութիւնը:

Այն կապը, որ կայ մեր բաժանորդների և «Սաթարալայի» միջև բարձրագլուխ հրամայում է և «Սաթարալային», որպէսզի սա իր բաժանորդագրութիւնը բացի և, բաժանորդներին, որպէսզի նրանք էլ և՛ բաժանորդագրին և մեր թերթը տարածեն ամեն շրջաններում, նւրանոր բաժանորդներով և նազդ բաժանորդներով՝ ստուարացնելով իրենց թիւը, մեր շրջանները:

Եւ «Սաթարալան» էլ, որ մինչ այսօր հայ ազգի խինդ ու վիշտ օրերում միշտ հենգող է եղել աշխարհիս խերն ու շարը, մարդկերանց լաւն ու վատը և մեր գործիչները, այսուհետեւ էլ խոս-

տանում է այն ուղիով ընթանալ ինչ որ նախագծել ենք մեր բոլոր համագումարներում, քէֆերում և մազաչափ չչեղւել մեր պլատֆորմաներից:

Միաժամանակ «Սաթարալան» խնդրում է խոնարհաբար, բաժանորդագրողներին, իրենց հանգիստ պահել, դալթաբանդ բաների մէջ չընկնել, փիս մարդկերանց հետ գործ չունենալ, լրագրներին շատ չընաւատալ, կաթուղիկոսական հարցով զբաղւելիս՝ խելքն ու միտքը չըկորցնել, ուրախ ժամանակ անցկացնել, ամեն մի յիմար բանի համար չը վրդովւել, կուսակցութիւններին հեռու մնալ, անկուսակցականներին չենթարկւել և միմիայն «Սաթարալա» կարգալ նամանաւանդ շաբաթ և կիրակի օրերը:

Այս պայմաններում մենք մեր բաժանորդներին խոստանում ենք երկարակեցութիւն տողջութիւն և ուրախ տրամադրութիւն:





«Սաթաբալայի» բաժանորդագիրը գիտեք թէ ինչ արժէ—ընդամենն հինգ ռուբլի—եթէ իւրաքանչիւր՝ բաժանորդը հինգ բաժանորդ գանէ և սրանք էլ իրենց հերթին այդպէս օրինաւոր վարեն, մենք հաստատ համոզւած ենք, որ ապագայում աշխարհիս երեսից կը վերանան ամեն տեսակ ցաւ ու դարձեր և գայլն ու գառը միասին կարածեն:

«Սաթաբալայի» գոյութիւնը անպակաս թող լինի աշխարհի վրայից և հայոց ազգից զլխից:

Օրհնութեամբ, ցնծութեամբ և յաջողութեամբ դուք ձեր մուրազներին հասնէք, մեզ էլ՝ մեր բաժանորդագիրները շուտով ուղարկէք:

**ԲՆԺՆՈՐԹ ԳԻՒԷՑԻԷ**

Վունց վոր աղաթէ, աթադան բարադան, վոր նուր տարուց աղաք պտէն բաժնորթագրութեանի համա գազէթները իրենց դռները բացին, մինք էլ սիրիլի ասկ, էտինց էնք անում:

«Սաթաբալայի» համար բաժնորդագրութիւն ինք բացում ու հրամանք անում հայուց ասկին՝ չալիշ գան էս տարի մինչկի տաս միլիօնի հասցնին մի բաժնուրթների թիւը:

Շատ չինք ասում.

Տաս միլիօն.

Ի՞նչ է տաս միլիօնը, վունչինչ. դիւիս, դուրթ վուր վունչինչ հայուց ասկի համա, չունքի, հեսարի բան չէ՛ արպէր, մէ միլիօն ու մէ միլիօն կօնէ՛ երկու միլիօն, երկու միլիօն ու երկու միլիօն. չորս միլիօն կուլի, էստի էլ մէ միլիօն կէր—վուր վրէն աւիցնինք, կօնէ՛ հինգ միլիօն, հինգ միլիօն ու հինգ միլիօն իստակ կօնի տաս միլիօն:

Մաշ:

Մինք վուր էս սհաթիս տաս միլիօն նաղդ բաժնորթներ ունենանք, գիտիք թէ բանիւր կօնի՞նք:

Էստի հեսարի ու հաշի բան է:

Վունց վուր դուքնում դախլուդարը հեսարին պտի մտիկ տայ, էնինց էլ դուք իմ սիրական ասկ, պտէք հիսարով բան բունէք:

Աշխրքիս վրէն անհիսար աթմորթին չիկանայ ապրի:

Էդպուզէլ Մարքարը ասում է՝ ով

անհեսար աթմորթի լիցի, կօնէ, բեսար նամադուլ կօնէ, կօնէ:

Մենակ էս—էս Ստամբուլի պատկամաւորները վուր նուր էկիլ ին, սրոնցմէն իլաքի Չիխտի կոպին —նա էլ ասիլէ իր թաւթրներում՝ խիլքը, կօնէ, լաւ բանէ կօնէ, համա վունց թէ հայու գոգրումը կօնէ:

Էստուր իս էլ դաբուլ իմ:

Խիլքը հայու գոգրում, վունց վուր փուլը հորումը, աղաք վուր պահումէինք:

Համա խիլք ուրիշ ասկի գոգրում, հեստի բաներ է անում, վունց վուր կապիտալը բանկումը:

Այ «Սաթաբալէն» էլ էտթաւուր է. «Սաթաբալէն», վուր հիմի հայերումէջ չըլիւր, գիտիք թէ դովրանում կուլէինք, համա ի՞նչ—հէր օխնածներդ հէստի իք մարթու չարչրում, վուր հոքին ու մաշկն էլ հանում էք:

Իս ձիգ էլ գիդիմ, ձեր մամապապունցըն էլ. տօ՛՛, ձիր պապէրը չէին վուր խիղճ Գրիքոր Լուսաւորչին հազար ու մէ թաւուր չարչարանքի մէջ գցեցին—վիւջնէլ մէ Սոր վիրապի օրմոյի մէջ տանուհինգ տարի պահեցին, օձի, խլէզի, ճիճուների հետ:

Մաշ գուք էլիք, վուր հիմի էլ...

Է՛ ասիմ, վունց ասիմ, չասիմ ու ի՞նչի չասիմ:

Արժունուվը ի՞նչի մեռաւ, հ՛ը—աբա ասէք էլի, ի՞նչի մեռաւ:

Արժանուվը վունչինչ, մեռա՛ւ՝ մեռաւ թող չըմեռնէր: Նա ձեզ հետ ինչ հեսար ունէր, բա ի՞նչի մեռան ձեր մամա պապէքը, ան հիմի էլ ի՞նչի ին մեռնում ձեր ձեռքիցը. ձեր ձեռքիցը իս ու իմ գլտած հոքին, հիմի իս էլ վուր մեռնիմ ձիր ձեռքեմէն չի ըլլ՞. ձեր մեղը կուլի, համա ի՞նչ, թէ վուր տաս միլիօն բաժանորթ տաք՝ չիմ մեռնի:

Ուզում էք պէտած ձեռնագիր էլ կուտամ էտու վրէն:

Տաս միլիօն բաժանորթը մէ բան չէ գիդիք, համա տաս միլիօն ջէր հինգ մանէթը էգէբա բան դառնայ:

Իս էն չախը փուղ կուսինամ երկու քսան ու տաս միլիօն մանէթ:

Էրկու քսան ու տաս միլիօն մանէթնէլ մէ բան չէ. համա ձեր խաթրու համա ի՞նչ անիմ, գլուխս քարովը կուտամ երեսս պատով, հալթաթտա մէ բան կու փիքը անիմ, էլի, ասկը թային, թային փաթերակներեմէն կու ազատիմ, մաշ խոմ չիմ թողնի, վուր էսինց անտէրանայ, ով ինչ ուզի ասի, ով ինչ ուզի գրի, ով ուզի ուշունց տայ, ով ուզի օխնանք անի...

Է՛ էս թաւուր անպրագիրն ինչի էլ չիմ սիրում: Էն մէկէլ Երկուշիկ ինչի էլ մինք մի բաժնորթներուն խօստանում ինք մէ լաւ պրէմիա՝ կաթողիկոս:

Աբա տեհէք թէ ինչ թաւուր ինք ձիգ համա չալիշ գալի:

Էս տարի հոքիս դուս եկաւ կոնդակներ գրելով. դորթ ու դորթ, ի՞նչ է գլուխս խոմ ախպուստանում չիմ գթի, ինձ էլ քոմագ օբմին պտի ըլի թէ չէ: Մինք ձիգ թաւազա կօնինք մի լաւ կաթողիկոս ու թէ չըհաւանեցաք, յիդ ուղարկեցէք մէկէլին կու շոգինք:

Խնթրում իմ աղխալտինք առանց «Սաթաբալայի» չը թողնենք ոչ մի տուն, դուքան, բազար, աթմորթի:

Սստուձ ձիգ միգանից ու «Սաթաբալէն» էլ ձիգանից, ձեր գործը ու տնից անպակաս անէ: Ամին:

Սաթաբալայ ամեն հայուց  
Դասպար աղա Կարասուզով

**ԸՅՍ... ՄԻՆ... ԻՆ.**

Լուսաբացին ես քեզ տեսայ  
Երազներիս դիցուհի,  
Մաղիկների մարմանդ բոյրով  
Դու արբեցիր.—ես ասի,—

—Էդ ծաղիւնքից, քանի ցօղը  
Դեռ չի հաւել արևից,  
Մի փունջ կապիր և այդ փունջը  
Ես կկախեմ իմ կրծքից:

Մի փունջ կապիր և նրա մէջ  
Ի՞նձ ուղարկիր մատանիդ,  
Որ իմ սրտում տեղ տամ անվերջ  
Սիրագորով անունիդ...

Բայց դու անփոյթ, մերժեցիր ինձ  
Ու հեռացար լուսաբացին...  
—Ա՛խ, մոռացար դու ամեն-ինչ,  
Եւ տւիր ինձ տանջանքին...

Նարգիզ



Մեր զուտական բաժանորդների յարմարութեան համար ուղարկում ենք ՓՈՍՏԱՅԻՆ փոխադրական ԲԼԱՆԿՆԵՐ





—Չարկուրդի գալ զո օրստը խնդրելու ճիշտ պահում եմ...



—Ճիշտ պահում եմ, խնդրելու ճիշտ պահում եմ, քանի որ ճիշտ պահում եմ...



—Իմ առաջինը պահում եմ ճիշտ պահում եմ, քանի որ ճիշտ պահում եմ...



—Ճիշտ, առաջինը պահում եմ ճիշտ պահում եմ, քանի որ ճիշտ պահում եմ...





ԿՑԻՆՆԵ ԳԼՈՒԽՆԵՐ

Կրկէսի թատերասրահը ահագին բազմութիւն էր գրաւել: Եւ էլ տոմսակ վերցնելով, մտայ թատերասրահը...

Թատերասրահում Բաբելոնեան աղմուկ էր տիրում:

Հնչեց երրորդ զանգը և կրկէսում տիրեց խորին լուռութիւն. հազարաւոր ամբոխը զանգի մի փոքրիկ շնչիւնից դադարեցրեց իր Բաբելոնեան աղմուկը:

Դուրս եկան երկու հոգի և սկսեցին մենամարտել կրկէսի բեմի վրայ...

Երկու սրերի շաչիւնն էր լսում թատերասրահում. ամբոխը լարած հետևում էր մենամարտողների ամեն մի շարժածքին...

Բայց կարծէք մենամարտը զազարելու միտք չուներ... Երկու հակառակորդներն էլ հմտաութեամբ շարժում էին սրերը և պաշտպանում հակառակորդի հարւածից...

Բայց պատահեց այն ինչ որ մեզանից ոչ ոք չէր սպասում...

Յանկարծ երկու հակառակորդներն էլ միաժամանակ մէկ մէկու հարւածեցին վրէժներին և... և մենամարտողների գլուխները բաժանեցին մարմիններից և ընկան մի կողմը, իսկ մարմինները մնացին կանգնած:

Հասարակութիւնը քար էր կտրել...

—Այս ի՞նչ հրաշք է,— շփոթւած փսփում էին հասարակութեան միջից, ինչհետև մարմինները դարձեալ կանգնած են իրենց տեղերում, և այն էլ առանց գլուխների. չէ որ գլուխները չկան... ուրեմն ինչ՞ու պէտք է մարմինները կանգնած մնան...

Երկու անգլուխ մարմինները ղեռ կանգնած էին քարէ արձանի նման... մարմիններից ոչ մէկը մազաչափ անգամ չէր շարժում տեղից...

Ամբոխը լարած ուշադրութեամբ սպասում էր վերջաւորութեանը...

Անգլուխ մարմինները ղեռ շարունակում էին մնալ անշարժ...

Վերջապէս, ամբոխը անհամբեր սկսեց գոռալ:

— Բացատրութիւն... բացատրութիւն...

Այդ անլուծելի հարցը, մեզ բոլորիս էլ մտատանջութեան մէջ էր գցել:

— Ինչպէս կարելի է մարդուս գլուխը կըտրել, և մարմինը վայր չնկնի...

Բայց յանկարծ անգլուխ մարմինները սկսեցին, գլուխ տալ հասարակութեանը, մի նոր գլուխներով... որոնք բոխի նման բսան նրանց պարանոցի վրայ... Իսկ գլուխ տալուց յետոյ գլուխները դարձեալ անյայտանում էին...

Այդ երկրորդ հրաշքը, աւելի մտատանջութեան մէջ ձգեց ամբոխին...

Եւ ամբոխը կատաղած սկսեց աղմուկ բարձրացնել, պահանջելով բացատրութիւն...

Ամբոխի ցանկութեանը բաւականութիւն տալու համար, դուրս եկաւ դերասաններից մէկը և ասաց.

— Այս կարւած գլուխները կեղծ, գլուխներ են, որոնց ոչ մի կերպ չի կարելի զանազանել իսկական գլուխներից: Իսկ այն գլուխները որոնք նոր երևացին գլխատած մարմնի վրայ, դրանք իսկական մարդկային գլուխներ են, որոնք թագնւած են ուշտինէ վզնոցների տակ... գլուխ տալու ժամանակ ուշտինէ վզնոցները ներս են քաշում, և գլուխները երևում է, իսկ երբ մարմինը ուղիղ կանգնած է, այն ժամանակ ուշտինէ վզնոցը դարձեալ ծածկում է նրան: Այժմ ես ձեզ ցոյց կտամ իսկական գլուխները, — ասաց նա և արձակելով ուշտինէ վզնոցները մեր առաջ կանգնած էին երկու կենդանի մարդ...

Ամբոխը բռնու ծափահարութիւններով դղրդեցրեց սրահը, իսկ մուզիկան նւագեց բայլերգը, և մենք հեռացանք խորը տպաւորութեան տակ, կրկէսից...

Ահա ձեզ կարւած գլուխների բացատրութիւնը...

ԽՈՒՆԵ-ԺԱՆՈՒՅԻՆ



ԱՄՄՇՕՅԻ ԴԱՆԹԱՐԻՑ

Մոլլան բաղանիքում միբուքին հինայ էր դնում, կինտուն այդ բանը նկատելով իսկոյն մտածեց նրա գլխին մի օյին խաղալ:

Երբ մոլլան կողքին դրած ամանից հինան հանեց և առատադին նայելով միբուքին քսեց, կինտուն մի ակնթարթում վերցրեց հինայի ամանը ու տեղը նոյնանման ամանով բաղանիքի ցիխ դրեց:

Մոլլան բանից անտեղեակ միբուքը ցիխով ներկեց և մտաւ աւազանը լացելու: Մի քանի րոպէից յետոյ մոլլի միբուքը վայր ընկաւ, որը սարսափահար Ալլան, Ալլան գոչելով դուրս վազեց աւազանից:

Կինտուն մտնեալով նրան հանգստացրեց ասելով:

— Չարար եօիս, մոլլա ջան, հալբաթ միբուքը շրեշով ա ըլէ կպցրած, ան էլի թաղադան կպցրու, ան թէ չէ բխերդ էլ վեր արայ ու փրանգի տէրտէք դառ:

Կինտուն արգանը շալակած Գալալինսկով անցնելիս նկատում է, որ զինուորական երաժշտական խումբը նւագելով դիմացից գալիս է. իսկոյն ինքն էլ սկսում է նւագել

իր արգանը. կինտուից ոչ հեռու կանգնած ահալօղջոյնիկը մօտենում է և ասում:

— Է՛յ, նեղեայ իզրատ:

— Վա... զաչեմ...

— Դա տակ, վափշէ նի զազալիսեհդսիա...

— Բաս, էտը սալլացկի դուխոյ մուզիկա զաչեմ պազալսեցա:

— Դուրակ, տօտ վայնի օրկեստր, իմ մօծնայ:

— Չաչեմ սերչայիշ, էտը վայնիս արկեստր, մաշ մօյ դա դարաշուխտելիսակի արգանեստր—բարկացած ասում է կինտուն ու նորից նւագում իր արգանի վրայ:

Կինտուն իր սիրած ոռու օրիորդին նկատելով, որ բակը աւելում է, մօտեցաւ և կամենում էր մի շատ լաւ կօմպլիմետ ասել:

— ասաց

— Վա... գուշկա ջան, տի զղթա... վայ, ես թւօյի վինիկ կուշիլ...

— Չաչեմ, դուրակ, տի ժէ նի էշակ, — ասաց:

— Վա... գուշկայ ջան, տի դլէ մինէ ի եշակ, ի բարաշկայ, ի ինգուշկա, ի կանարեշկայ, գենացալէ:

Մի մարդ խնդրեց կինտուից, որ իրեն համար սուտ վկայութիւն տայ, թէ «այս ինչ մարդը գողացել է իրենից մի արծաթէ չիբուխ:

Կինտուն համաձայնեց:

— Այ, այս մարդը չիբուխս գողացաւ, — ասաց զանգատաւորը, այ էս կինտուն էլ վկայ է:

— Իրուստ ա, պարոն սուղիայ, էս մարթը սրա բաղադրին գողացաւ, — ասաց կինտուն:

— Չիբուխ, ասա տօ, չիբուխ, ուղղեց զանգատաւորը:

— Դիփ մէկ չի, վրայ բերեց կինտուն, մի բան, որ սուտ եմ ասում, կուզես չիբուխ ըլի, կուզես բաղադրի:

Կինտուի կինը մի քանի օրով հօրանց տուն էր գնացել, որ ամուսնուց մի այսպիսի նամակ ստացաւ.

— Չան ջան, մեր կոխիկ օթախը մի որբեկերի, մաղբամ խիստ սիրուն կնիկ բռնեց, ձերաց հետը դոստացայ, հետս ըննեց լաւ ա, որ սիպտակէզնէս ու նասկիքս է լաւնում, սաղ օրը մեր տանն առ:

Կինտուի կինը վախեցած եկաւ տուն և տեսաւ, որ սենեակ վարձողը մի քաւթառ կին է:


Մի քանի ժամանակից յետոյ էլ, մի քանի օրով կինտուն հեռացաւ տանից և մի այսպիսի նամակ էլ նա ստացաւ կնոջից:

— Թու գնալուց հետը, մեր կոխիկ րաղալը հետտի դոստացաւ, որ սաղ օրը մեր տանն ենք, ինանդիսխան դեքն էլ մեր տանն ա քնում, էս մարթը խիստ քեփուսա գալիս ա, շատ դայրաթով մարթ ա, ու քեզ պէս սնդալ չի:

Կինտուն իմանալով կնոջ ստատնութիւնը պատասխանում է.

— Ես ուզում էի էս քանի օրս զայ, համար





որ իմացա մեր տանը ըտենց մուգայիթ մարթ կայ, խիստ արխէյնացա. փառք Աստու, որ մենակ չես, մաշ ես էլի մի քանի ամիս կուշանամ:

Դատարանում.

Նախագահը. դատարանը արդար գտնելով մեղադրեալին, որ մեղադրուում էր ժամացոյց գողանալու մէջ ազատում է նրան պատժից:

Արդարացածը. (իր փաստաբանի ականջին) պ. փաստաբան հիմայ կարող եմ ժամացոյցը դործածել.

— Ուրեմն դուք անասնորոյժ էք, շատ ուրախ եմ, որ ձեզ պատահեցի.

— Ինչու?

— Որովհետեւ ես չափազանց շատ եմ սիրում անասուններին...

Ես քեզ տասը անգամ կը ծախեմ, քան թէ դու ինձ մի անգամ...

— Այո, ճիշտ է, որովհետեւ քեզ համար ինձ ոչ ոք, ոչ մի քոռ կողէկ էլ չի տալ:

Վահագն Ա. Ա...

ՓՕՎՈՒՍՆԻԿԸ

(նւէր ամուսնացած տղամարդկանց)

I

Պետիկը ծառայում էր մի հարուստ մարդու մօտ:

Մի օր, նա նկատեց թէ ինչպէս տիկինը խաբելով ամուսնուն՝ գնաց սիրեկանի մօտ:

Այս դէպքը իսկոյն նշանակեց Պետիկը իր տետրակի մէջ, և որոշեց այդ օրւանից, նշանակել այն բոլոր նման դէպքերը, որով տիկինը կը խաբէ մարդուն, ու կը գնայ, և գրեթէ ամեն օր առիթ էր ունենում մի նոր բան գրելու տետրում:

Մի օր հօրանց տուն, միւս օրը քրոջ, երրորդ օրը խնամու և այսպէս շատ դէպքեր...

Շուտով Պետիկի տետրակը լցեց. նա գնեց նորը, և այսպէս 3 տարւայ ընթացքում, նա արդէն ունէր մի անագին գիրք, որին մեծ հաճոյքով անւանում էր «Փօկուսնի դաւթար»:

Լրացաւ Պետիկի ծառայութեան ժամանակը, և նա հաշիւները մաքրելով, դուրս եկաւ տիրոջ մօտից, չմոռանալով հեռու վերցնելու և իր «Դաւթարը»:

II

Պետիկը բաւական տնտեսութիւն ձեռք բերեց, շինեց իր համար մի տուն, և ապրում էր ապահով՝ երբ ամեն կողմից նրա գլխին թափւեցին բարեկամները, ու ստիպեցին նրան ամուսնանալ:

Պետիկը ամուսնացաւ...

Մի օր կինը խնդրեց Պետիկին, թոյլ տալ իրան գնալու հօրանց տուն: Պետիկը կնոջից ծածուկ նայեց «Դաւթարին» և ասաց

չի կարելի, «դաւթարը» թոյլ չի տալիս...

Ի զուր էր կնոջ աղաչանքը մի ուրիշ անգամ. Պետիկը «դաւթարի» պոչը չէր թողնում, և այդ դեռ բաւական չէ, նա գործի գնալիս անգամ, տան դուռը կնոջ երեսին փակում էր:

Ամուսնութեան օրից անցել էր արդէն 3 ամիս, և խեղճ կինը դեռ տանից դուրս չէր եկել:

Մի օր ճաշի ժամանակ կինը հարցրեց Պետիկին, նրա այդ տարօրինակ ու կասկածելի վարմունքի պատճառը, և Պետիկը ասանց քաշելու ասաց, որ նրան չի հաւատում: Այդ օրւանից կինը վճռեց, ինչ էլ որ լինի վրէժխնդիր լինել մարդուց:

III

Կիրակի օր էր... գիշերը անձրև էր եկել, և առաւօտեան արևի ճառագայթները մի տեսակ ուրախ խաղ էին սկսել անձրևի կաթիլներին հետ. գարնանային զով քամին մեղմ օրօրում էր ծառերի տերևները:

Կինը Պետիկին խնդրեց ասելով.— Եկ՛ էս լաւ եղանակին, միասին գնանք եկեղեցի աղօթելու:

Պետիկը իսկոյն վազեց «դաւթարի» մօտ և թերթելով այն, մէկը ոչինչ արգելք չը գտաւ: Երևի իր նախկին տիկինը այդպիսի պատրւակով չէր խաբել մարդուն:

— Գնանք, ապաց Պետիկը— «դաւթարը» թոյլատրում է: Ու նրանք գնացին...

Եկեղեցու դռան մօտ, կինը դիտմամբ վայր ընկաւ, ու շորերը ցելստեց:— Մարդ, ասաց նա, ամօթ է այսպէս եկեղեցի մըտնելը. կանգնիր այնտեղ, գնամ շորերս մաքրեմ էս պոռուի տանը ու ետ գամ: Կինը գնաց, և քիչ յետոյ դարձաւ շորերը մաքրած: Գնացին եկեղեցի, աղօթեցին, և ուրախ սրտով դարձան տուն. բայց այդ օրը Պետիկը աւելի ուրախ էր, որ «դաւթարը» իրան շատ է օգնում:

Երեկոյեան, շորերը մաքրող պառաւը, մի մեծ սնդուկ մշակի շալակը տւած բերեց Պետիկի տուն ու խնդրեց այն պահել մի քանի օր, ասելով, որ ինքը հաւատարիմ ծանօթ կամ բարեկամ չունի իրերը պահ տալու համար, աւելացնելով, որ մի քանի օրով հեռանալու է քաղաքից:

Պետիկը համաձայնեց, և սնդուկը տեղաւորեցին ննջարանում, կնոջ խորհրդով, որովհետեւ վերջինս առարկում էր թէ ինքը փակած է լինում տանը և կարող են ուրիշ տեղից գողանալ:

IV

Անցաւ երեք օր, և պառաւը եկաւ. սնդուկը տանելու: Մութն էր... Պառաւը խնդրեց Պետիկին, որ սնդուկը տանի, քանի որ ինքը չէր կարող տանել և մշակ էլ չկար:

Պետիկը համաձայնեց...

Պառաւի գնալուց քիչ յետոյ, Պետիկը սնդուկը շալակեց և ճանապարհ ընկաւ: Փո-

ղոց-ւմ ոստիկանը նկատեց իր սիրտայնի կանգնել:

Պետիկին տարան պրիստաւի մօտ: Պրիստաւը հրամայեց նրան տանել իր տուն, որպէս կասկածանքով լուծած գողի, մինչև քննութիւն:

Խեղճ Պետիկը սնդուկը շալակած, հէնց որ ուզում էր մտնի պրիստաւի տուն, տեսաւ թէ ինչպէս պրիստաւի կինը նստած երեք մարդու հետ կատակներ էր անում:

Դուռը բացելուն պէս մարդիկը պահեցին մէկը պահարանում, միւսը մահճակալի տակ, իսկ երրորդը ծալքում: Տուն մտաւ Պետիկը, սնդուկը վայր դրեց և վրան տըխուր-տրտում նստեց:

Կէս գիշերին պրիստաւը եկաւ տուն, իր մի քանի ընկերներով, և նախքան Պետիկի քննութիւն կատարելը նստեցին ընթերթի:

Քէֆի լաւ ժամանակ, պրիստաւը մօտեցաւ Պետիկին և հարցրեց.

— Այ մարդ ի՞նչ արհեստի տէր ես.

— Աղբ, ես ֆօկուսնիկ եմ... եղաւ պատասխանը.

— Ապա մի այնպիսի ֆօկուս արա, որ բոլորս էլ ծիծաղենք, հրամայեց պրիստաւը:

Պետիկը վերցրեց մօտի ձեռնափայտը, և մօտենալով պահարանին, երեք անգամ զարկելով ասաց.— Այ մարդ դուրս եկ, հիւրերիս գլուխ առը ու գնա՛ ազատ ես: Մարդը դուրս եկաւ պահարանից, քաղաքավարի գլուխ տեց հիւրերին ու գնաց: Դահլիճը թնդաց «ՏՐՕՅՈՎ»-ներով ու ծափերով:

— Ապա մէկն էլ արա, գոռաց պրիստաւը. Պետիկը մօտեցաւ մահճակալին, և նոյնն կրկնեց. դուրս եկաւ երկրորդ մարդը և գլուխ տալով հեռացաւ... նորից ծափեր...

Ուրախութիւնը շարունակում էր... Երրորդ անգամ պրիստաւի կինը խնդրեց մի ֆօկուս ևս կատարել. Պետիկը չմերժեց տիկնոջ խնդրին և մօտենալով ծալքին նոյնը արաւ. երրորդ մարդը նոյնպէս դուրս եկաւ, և քաղաքավարի գլուխ տալով գնաց... Ինչ ասել կուզի, որ ուրախութեանը չափ չկար...

Պրիստաւը մօտեցաւ Պետիկին, շոյեց նրա գլուխը և ասաց.— Սիրելի ֆօկուսնիկ, դու անչափ ուրախացրի մեզ, եթէ մի մարդ էլ հանես քո սնդուկից, այն ժամանակ ազատ ես:

Պետիկի թուրը ցամաքեց... Ի՞նչ անէր խեղճը, պառաւի իրերից ինչպէս մարդ ստեղծէր, ինչ հնարով հանէր...

Շատ խնդրեց խեղճ Պետիկը, որ 4-րդ ֆօկուսը չկատարէ, բայց ի զուր...

Է՛հ, ես բախտ մտածեց Պետիկը, չի դուրս գայ, կասեմ ֆօկուսըս երեքից աւել չի լինում: Անհամարձակ մօտեցաւ նա, վերցրեց փայտը և սնդուկին խփելով գոռաց.

— Այ սնդուկի միջի մարդ, դուրս եկ, հիւրերին գլուխ տուր և գնա՛ ազատ ես...

Եւ 6 զարմանք... սնդուկի դուռը կամաց բացեց, դուրս եկաւ ներսից մի գեղեցիկ տղամարդ, և գլուխ տալով հեռացաւ:



Դահլիճը թնդաց ծափահարութիւններով, իսկ Պետիկը մնացել էր շարած կանգնած իր վերջին ֆոկուսից:

Զննարկեան



ՄԱՐԿԻՆԻՆԵՐԻ ՍԵՆՏԻՐՆԵՐ

(Քեռի Մարկոսի պատմածներէրից)

Թէյը խմելով վերջացնելով և մի ծխախոտ վառելով, Քեռի Մարկոսը այսպէս ըսկսեց իր պատմութիւնը:

—Այս անգամ, պարոններ, ես պէտք է պատմեմ ձեզ մի դէպք, որին քիչ էր մնացել ես զոհ գնայի, բայց ազատեցի շնորհիւ բաղտի բերմունքի և Աստուծոյ անհասանելի կամօքի: Դէպքը պատահել է ինձ հետ Աֆրիկայի սևամորթներին աշխարհում, այն ժամանակ, երբ իմ ողորմած հոգի ընկեր Աւօն վաղուց մեռած էր և ես ճանապարհորդում էի միտանակ:

Մի անգամ, կէսօրեայ տօթին, ես անցնում էի անապատներից մէկով, քայլերս ուղղած դէպի հիստիս: Չորս կողմը ոչ մի գիւղ, ոչ մի ծառ, նոյնիսկ ոչ մի թուփ էլ չկար: Արևը անխղճօրէն այրում էր ինձ, ծարաւը տանջում, իսկ մօտիկ ջրի կաթիլ անգամ չկար: Բացի այդ բոլորը, սաստիկ նեղութիւն էր պատճառում ինձ նաև վերարկուս, որ ես յիմարբար վերցրել էի, կարծելով թէ ճանապարհին ցուրտ կըլինի և որը իմ ուսերիս էր գցած:

Երկար ժամանակ քայլելով, ես արդէն չափազանց հոգնել էի և հէնց այն է ուզում էի նստել մի քարի վրայ և փոքր ինչ հանգստանալ, երբ յանկարծ յետևումս ինչ որ ձայններ լսեցի: Գլուխս շրջեցի և... սարսափից մնացի քարացած, տեղս կանգնած. վայրենի ճիչեր արձակելով և երկար ու սրածայր նիզակները ճոճելով, վազէվազ դէպի ինձ էին գալիս հինգ վայրենի, աչքերը արիւնով լցած, մարդակեր սևամորթներ: Ոտքերս սկսեցին դողալ, սիրտս լցեց սարսափով և ես քիչ էր մնացել վայր ընկնէի կանգնած տեղս, բայց յետոյ խելքս զլուխս հաւաքեցի և մտածեցի, որ էժան չպէտք է ծախել, այլ պէտք է պաշտպանուել, որքան որ հնարաւորութիւն կայ: Բայց ինչպէս, քանի որ ինձ ոչ ատրճանակ, ոչ դանակ և ոչ էլ նոյնիսկ փայտ ունէի ձեռքիս, ուստի սկսեցի բոլոր ոյժովս առաջ վազել:

Չնայելով, որ ոտքերս չէին ուզում հպատակել ինձ չափազանց յոգնած լինելուց և քիչ էր մնում երեսիս վրայ վայր ընկնէի, բայց ինձ հետամտողները քայլերի ձայնը շարունակ աւելի և աւելի մօտ լսելով ես, որքան ոտքերումս ոյժ կար, վազում էի: Վերարկուսի մի կողմը արդէն սահել էր մի ուսիցս, շուտով միւս կողմն էլ սահեց և, նա բոլորովին վայր ընկաւ ուսիցս:

Ես ինչ որ թեթևութիւն զգացի վրաս և, ոյժերս կրկնապատկելով, քայլերս աւելի արագացրի: Շատ չանցած, ես զարմանքով նկատեցի, որ իմ յետևումս այլևս ոսնածայն չի լուում, յետ նայեցի և իսկապէս տեսայ որ ինձ հետամտող մարդակերները չկան...

Մինչդեռ զարմանքից աչքերս այս ու այն կողմն էի դարձնում, կամենալով իմանալ թէ որտեղ են կորել վայրենիները հեռուում, ինձնից մօտ 200 քայլ հեռաւորութեան վրայ ինչ որ սև բան նկատեցի: Մի բոլակ էս մտածեցի, որ այդ սևամորթներն են կուռում իմ վերարկուսի տիրանալու համար, բայց յետոյ տեսնելով որ կոյտը չի շարժուում, այլ անշարժ ընկած է, ես վճռեցի վերադառնալ և տեսնել ինչ է:

Շարունակ չորս կողմս նայելով, որ մի գուցէ այդ միջթակարդ է լարած նրանց կողմից ինձ համար և յանկարծ դուրս թափուելով ինձ վրայ կարող են յարձակել, ես սկսեցի կամաց կամաց յետ գնալ դէպի հեռուում նկատուող սև կոյտը և, երբ մօտեցայ, կարող էք սրբնօք երևակայել պարոններ, թէ ես ինչ տեսայ:

Երբ վերարկուս մի ուսիցս քաշ եղած ես վազում էի, ամենից առաջ վազող մարդակերը յանկարծ ոտքով կոխում է նրան, երևի կարծելով թէ գրանով կարող է կանգնեցնել ինձ: Վերարկուս վայր է ընկնում, իսկ ես թեթևանալով, սկսում եմ աւելի արագ առաջ վազել: Բայց դուք երևակայեցէք այն կատաստրոֆան, որ պատահել էր իմ յետևումս. ոտքը վերարկուսի վրայ դնելով, առաջին սևամորթը յանկարծ վայր է ընկնում, ամրող ծածրութեամբ ընկնելով իր նիզակի ծայրին, որը ծակելով նրա կուրծքը, դուրս է գալիս մէջքից: Երկրորդ մարդակերը չնկատելով նրա վայր ընկնելը, ինքնուրույն շարունակում է իր վազքը և յանկարծ մօտենալով առաջին ընկածին, ոտքը կպչում է նրան և նոյնպէս վայր է ընկնում, թարսի պէս առաջին մէջքից դուրս ցցւած նիզակի վրայ և նոյնպէս շամփրուում... նոյնն է պատահում նաև երրորդ, չորրորդ ու հինգերորդ մարդակերների հետ:

• Եւ այժմ իմ առաջ ընկած էին այդ հինգ հոգին, խորովածի պէս շարած մի նիզակի վրայ:

Ես մօտեցայ, վերցրի վերարկուս, գցեցի ուսիս և յետոյ բռնելով նիզակի ծայրից, բարձրացրի և հինգ մարդակերներն էլ նրա վրայ շարած դրի ուսիս ու հանդէ...

Բայց քեռի Մարկոս, ինչպէս դուք կարողացաք տանել ձեր ուսերի վրայ այդ հինգ մարդակերներին, միթէ նոքա ծանր չէին: Այդ, ներքեցէք, ինձ անհաւատալի է թուում: Քեռի Մարկոսը նայեց խօսակիցներին, ժպտաց և ասաց.

—Այ հէնց բանն էլ դրա մէջն էր, որ նոքա կենդանի մարդիկ չէին. այլ դարմանով լցած սևամորթների մորթիներ:

Խօսակիցները մնացին զարմացած միմիանց երեսի նայելիս, իսկ նրանից մէկը հարցրեց:

—Բայց ինչպէս կարող էին այդ մարդիկ ներք վազել:

— Է՛, սիրելիներս—ասաց Մարկոսը, — դուք դեռ երեսայ էք, մարդակերներին չէք տեսել, եթէ տեսած լինէիք, կիմանայիք, որ ոչ միայն նոցա դարմանով լցւած մորթիները, այլ նոյն իսկ փթած ոսկորներն էլ են վազում...

վրում

ՆԱԿԵՐԱԿՆԵՐԻ ԹԻՒՆ

«Սաթարալայի» սոյն տարւայ № 4. հրատարակեցինք «Օձ» լրագրի 1-համարը: Մեզանից անկախ պատճառով, անակնկալ պատճառներով և վերջապէս ծուլութեան պատճառով, և մի քանի սուտ պատճառներով այսքան ետացաւ «Օձ»-ի 2 համարը: Ուստի ներողութիւն խնդրելով կանխիկ վճարող բաժանորդներից հրատարակում ենք 2-Ն-ը:

„Օ Չ“

Առաջին տարի № 2.

Ամեն ընչական շաբաթաթերթ: Տարեկան բաժանորդագինը առայժմ յայտնի չէ:

Առաջնորդող

Մենք աւելորդ ենք համարում ընկամներ հրատարակելու, խոշոր խոշոր խոստումներ անելու, ապագան ցոյց կտայ մեր գործի արդիւնքը: Մենք հրապարակ ենք իջել մարտիրոսելու. զոհելու, նիւթապէս ֆիզիքապէս այրելու: Մենք հեռու պիտի լինինք կրքից, կուսակցութիւնից: Մենք մեր թերթը չպիտի զարգարենք ափեղ ցփեղ հայհոյանքներով: Մենք չպիտի թոյլ տանք ժող հայհոյելու մեր ցածհոգի հակառակորդներին, չպիտի կծենք այդ յաւիտենական ստախօսներին, մենք չպիտի ապտակենք այդ ամենագարշելի զիբիլներին, մեր կեանքի ապականութիւնից ծնւած գարշելի որդերին:

Մենք չպիտի հայհոյենք այդ կատաղած փրփուրը բերաններին բռնած գրչակներին: Մենք իրաւունք չունենք գրականական սուպարէզը փողոցային հայհոյանքներով սլըզծելու, այդ անֆարաշայ եզրիտներին անպատեւելու: Մեր մազերը փշաքաղում են, երբ տեսնում ենք մեր հակառակորդների այդ խլուրդային սևահոգի պնակալէզներ լրագրում շարած անպատկառ հայհոյանքները: Տօ լրբեր. տօ անզգաճներ, ամօթ է վերջապէս, խօսէք, վիճէք իրար հետ առանց հայհոյանքների առանց կրքի: «Օձը» հեռու պիտի լինի հայհոյանքներից, բարձր պիտի պահէ իրան այդ անզգամները: Մենք փղի և բօթօթի առակը մտաբերելով անսայթաք պիտի շարունակենք մեր ճանապարհը առանց ուշք դարձնելու մեզ վրայ հաջողներուն: Թող այդ ենիչարիները, այդ վեհաբանի կատուները, այդ տականքները, այդ ցինիկները, այդ անպատկառ լղղանները ինչքան ուզում են թող լղղան, կատաղին



փրփրին, թող մեզ հայնոյին. մենք պիտի լուենք, որովհետև հայնոյելու սովորութիւն չունինք: Մեր բերանը, մեր գրիչը սովոր չէ հայնոյանքներ շարելու և սրան նրան վերաւորելու:

Խմբագիր-Տրատարակիչ Ղալայշի Մարգար հալալ եղբայր Գէրբրաս

ԿԱՔՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Շուտով կը գայ դեկտեմբերի 11-ը և կը վերջանայ մեր թղթակիցների, աշխատակիցների հրապարակախօսների կատարի պայքարը: Բոլորը կը կապեն իրանց հայնոյանքների տոպրակները բերանը: Մի քանի շաբաթ հանգստութիւն, արձակուրդ կը լինի: Բոլոր կուող կողմերը իրանց զօրապետներով ու մանր ու խոշոր զինւորներով միասին չափ է չափ կզնան օժեւած հայրապետի աջը կը համբուրեն և ներողութիւն կը խնդրեն իրանց շող տւած հայնոյանքների համար: Հիմի հարց, ապագայ Հայրապետը արդեօք ի՞նչ դիրք պիտի բռնէ, որ համ հայր Մելեանցին դուր գայ, համ Լէօյին, համ Հովիտին. համ Մուրադբեկեանին, համ Քալանթարին, համ Գասպար Կալատողին, համ Ղալայշի Մարգարին: Ահա քեզ դժուար լուծ, անտանելի պաշտօն: Առաջաբերած թեկնածուներից մէկը պիտի գահակալ է. ուրեմն մի կուսակցութիւն պիտի տապալուի: Այդ յաղթեւած քանակի զօրապետները պիտի փակեն իրանց աջքերը և ոչ մի լաւ բան չպիտի տեսնեն իրանց չափած հայրապետի մէջ: Պիտի լինեն բժականներ, լուսն ուղտ պիտի շինեն ու հրատարակեն:

Օձը այսօր հրապարակ է հանած իր թեկնածուն: Օրմանեանցը թէև գիտնական է, բայց սիրտ չունի, կաթոլիկ է: Մուրէնեանցը թէև երկու անգամ տեղակալ է, բայց կրքոտ է... Գուրբանը մաքուր հայ է, բայց հոսհոսների երկրից է. Պարզեանցը անգնահատելի եկեղեցական է. բայց ծեր է. Մեսրոպը մաքիստրոս է, բայց զեռ շահել է. Մուրադբեկեանը փառաւոր միջուկ ունի. բայց չի կամենում: Ուրեմն ամենայամար թեկնածուն կաթոլիկոսական գահի համար եփուրեմ պրքազանն է. Ուխտանէս վարդապետն էլ շատ յարմար է, բայց նա էլ թողել է հոգևոր կոչումը և զրկել է հայոց ազգին ամենաընտիր հոգևորականից:

ԳԵՐԵՐ

Ախլբալաքի գիւղերում ամեն տեղ տիրում է կատարեալ կենդանութիւն, Մի քանի գիւղեր արդէն իրաւունք են ստացել մի մի լրագիր հրատարակելու, որովհետև մայրաքաղաքների թերթերը իրանց բաւակաւորութիւն չեն տալիս: Զարթնել է մինչև անգամ Ախլբալաքը և «Ջալալաք» անունով լրագիր պիտի հրատարակէ առանց հայնոյանքի:

ԿԱՐՍՈՒՄ ԴԺԲԱՄՏՈՒԹՅԱՆ ԴԷՊՐԵՏ

Շատ կանայք և օրիորդներ վաղուց գահակալ էին տւել կանկիներ գնել և անհամբեր սպասում էին գետի սառելուն, որ սառցի վրայ արնկի խաղան, երբեմն չոքեն. քամակի վրայ փուշն, կլոր պոռոտներ անեն, կաւալերների հետ թեթևի տւած օձի պէս սողան սլանան: Բայց դժբախտաբար այս տարի մինչև հիմի եղանակները դարձան պէս տաք են, զեռ ձիւն չի եկել և գետը չի սառել, և ինչպէս երևում է, մինչև դեկտեմբերի վերջը կը տևէ այս դժբախտութիւնը:

Մի քանի կարթի սիրահարներ անապատելի կերպով հիւանդացի էին և երևակայեցէք ամբողջ երկու օր կանաչ սեղանի երես չտեսան, կարթ ձեռք չառան: Հիմի փառք Աստուծո այդ դժբախտութիւնն էլ անցաւ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Թէև քարտէզին անձանօթ, Կարսի նեղ շրջանից դուս չգնացած գիտնականներից քաղաքազէտներից ոմանք մտնում են տաք վէճի մէջ և պնդում են թէ. «Գերմանիան Տաճկաստանի հետ նատարեալի պայման է կապել և շուտով նա մեծ զօրքով մտնելու է Դարգանելի նեղուցը և այնտեղից պիտի ուժեղանայ Կերէն: Իտալացիք էլ Տրիպօլիսը արդէն խլել են և շուտով Բոստոնի էլ Ռուսաստանից կը խլեն և այդ երկու ծովափնայ քաղաքներ կը լինի անառիկ ամբողջները Իտալիայի համար: Վանն էլ ուղում են միացնել Կովկասի հետ բանալով մի նեղուց Վանայ ծովից մինչև Սևանայ ծովը: Այդ երկու ծովերը իրար միացնելուց յետոյ, Պոլիսը էլ մի կուպէկ չարժէ»:

Յայտարարութիւններ

Չտեսնեւած հրաշաք. բոլորովին ձրի: Վրճարեցէք միայն 1 ր. 15 կ. և դուք կտանաք երկու հատ թաղայ վեղար խաս կտորից, մի խաս վերարկու, մախուրից կարած մի լաւ կամիրլակայ. թանկագին կըտորից մի լաւ խառ անթարի: Այդ բոլորը միասին արժէն 50 ր.: Բայց որովհետև դրանց տէրը հոգևոր կոչումը թողել է նոյեմբերի չգիտեմ քանիսին և դառնալու է պարոն, ուստի նրան հարկաւոր չեն հոգևորականի շորեր: Դիմանալու կողմից երաշխաւոր են բոլոր կարգալուծ եղած էքս վարդապետները:

Չնաւանած դէպքում փողերը կարող էք յետ ստանալ: Հասցէն Հաղբատ-Սանահին կարգալուծ եղած էքս վարդապետին:

ԼՐԱՏՈՒ

Լրագիրներից երևում է որ շուտով կատարելու է մի շարք յօրեկաններ ազգային գործիչների, ուսուցիչների, հրապարակախօսների, գրագիրների, 40 տարւայ ժամկոչների: Մենք մեծ քանակութեամբ ստացել

ենք յաւուր պատշաճի հսկէ (պահպանել) իր պաշտօնը ծաղկանկարչութիւնը գարշապուտ իմաստալից ճառեր: Կան համառօտները և ընդարձակները: Իւրաքանչիւր բառ մի կուպէկ: Մեծ քանակութեամբ առնողներին 40 տոկոս զիջում կանենք: Յանկացող կարող է դիմել Կարս Ղալայշի Մարգարին: Ղալայշի Մարգարի հալալ աղբէր Խմբագիր--հրատարակիչ Գէրբրաս

Հիրանցում

—Վաղը առաւօտեան ժամը 4-ին արթնացրու ինձ, որ ժամը 5-ին դելիշանը գնում է Սղնախ հասնիմ:

—Լաւ, դուք զանգահարէք ձեռ ուզած ժամին, ես պատրաստ կը լինեմ և իմաց կը կը տամ ձեզ:

Հիւանդանցում

- Աղջիկդ քանի ասրեկան է:
—Քառասուն տարեկան:
—Իսկ դու քանի տարեկան ես:
—Ես Շամիրի կուի վախտը ծնւել եմ. ուրեմն կը լինեմ 30 տարեկան:



Ձիւնորագրութեան ժամանակ


—Աղա, աջու աչքս քօռա, տեսնում չի, պատասխանեց Պայուբաշեցի երիտասարդը աջ աչքը գիտութեամբ խփած իրեն քննող բժշկին:

- Իսկ առաջ ոնց էր:
—Էսպէս, աղա ջան, աչքը բանալով պատասխանեց վերոյիշեալ երիտասարդը:

Մախանձում եմ


—Նախանձում եմ քեզ վրայ, որ ամեն անգամ տեսնում եմ քեզ մի գեղեցիկ օրիորդի ուղեկցելիս:

—Դժբախտաբար նա իմ քոյրս է:





ՅԻՄՆԵՅԿԱՆ  
ՆՈՒՆՈՒՄԻՆՅՅՆ



P. T. P.

—Վայ, վայ, վայ, վայ, մտրկ արեք մեզ լոբոներ են անաւնում թղովները, որ լոբո լինէինք մեզ խօ մինչև հիմայ կուտէին:  
—Կուտէին, կուտէին, որ լինէինք կուտէին:

Բ Հ Օ Կ



P. T. P.

ՀԱՅ-ՎՐԱՏ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆ ԲԱՂԱԲԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ.

Գօտտա.—Սն պարոններ, ինձ համար չեմ ասում, ինձ թնչ. ինձ պլխաւորապէս մի փափուկ տեղ տւէք, հաստացէք ինձ համար չեմ ասում. ես ժողովրդի և մանաւանդ վրաց ժողովրդի համար եմ մտածում, որովհետեւ ես եմ ամբողջ վրաց ազգութիւնը. ես ձեզ չեմ ասում. սիրելուցս է, որ ուզում եմ ազգայնական հարցեր յարուցել:



ՅԵՄԻՆ ԲԱՆ ԹԱՐԱՎԵԼ Է

Ասրբա զայ է է զիր. բիթուն թարավիր ին: Օգոստոսին ձուն էկաւ, ջրերը սառան, եայլաներուն մէջ բոլուկներով մալ ու օշխար ջարդաւն: Նոյեմբերն է հըլա ձուն մուն չկայ, խանուհները իրենց կավայերներին հետուլիցներուն մէջ տէյմոր գիշերվայ 10ը գեազմիչ գլին կը: Աս մէկ թարս բան:

Հարիֆը յուսում է առիր, օրիթը կլաս է անցիր, զակօն մակօն բիթուն բերան է էրիր, ասպէս մարդուն չին ջսկի, գործի չին դնի. մէկալը անունը թամամ գրել չի կանայ, չիմ գիտիր ինչ չէ էղիր, սղայ է դառիր, գիրացիր. ուռիր խոզ է դառիր ճրագու է կապիր, ատպէս մարդուն ջոկին կը, գործին դնին կը: Աս ալ էրկու թարս բան:

Գիտունները թոփ ին էղիր, կաթուղիկոս պիտի ջոկեն: Վագոններով, ջալներով մեշոքներով, չաթաններով ճառեր կըսեն. արժանաւոր սրբազանին, գիտունին. ժամասէրին, աստածավախին սեցնին կը, նորելուկներին. ժամ պատարագ ուրացողին, ֆարմասնին ճերմկցնին յառաջ քաշին կը: Աս ալ յերեք թարս բան:

Շորագալու գեղերից չարսով մարսով թոփ ին էղիր Ղարս, գիտին թէ կաթուղիկոս ջոկիլու են էկիր: Դասերը սերտ ին. ապրին ատոնց վարժապետները: Չորս թարաֆէն ճվան կը. «մենք Օրմանեանցին չենք յուզեր, անիկ մատնիչ է. անիկ սուլթանի մարդն է: Հիմի մարդ պիտի ջոկեն օր էրթայ էրևան, հասկցնէ թէ մենք Դուրեանին ջոկիր ենք ատոր օծեցէք. զալմաղաներդ կտրէք:

Բաշ-Շորագեալցի զըն գեղացիմ, դարմընտին մէկը, օր քերեկանը նոր պրծիր. սաղմոսն էլ կէս է էղիր, ատոր 66 կճայ ցկին կը, անիկ օր յեռուն տարի վարժապետութենէ էրեր թարքմելը առիր է. անոր 5 կճայ ցկին կը: Ըշտայ ասիկ ալ չորս թարս բան:

Ձանմ, շաշմիր ֆնացիր իմ. վերը սերդուկ մերդուկ ծախէ, վեղար վերարկու կաննի. վարդապետ դառնայ կը. վերը վեղար վերարկու ծախէ կը, կնիկ կառնի կը:

Կսին թէ մեր Ուխտանէս հայր սուրբն ալ վեղարը պենջակ է շինէր. Ուխտանէս ամի է դառիր: Ափսոս. ափսոս. հազար ափսոս. զաթի ունէինք չունէինք մէ լաւ վարդապետ ունէինք, ան ալ մեզնէն հեռացաւ. աստից յետե ինչպ պիտի յըլի մեր էջմիածնի հալը. չիմ գիտիր:

Ղարայի Մարգար

Գրողի կինը

—Միքայէլ, գրողները քեզ պէս ուրիշէ գրածներէից չեն վերցնում, այլ իրենց խելքով են գրում:

—Ա՛ սարսաղ, նրանք հեշտ միջոցը չգիտեն և իզուր տեղից նեղութիւն են քաշում. բայց հեշտ միջոցը ես գիտիմ, էլ ինչու նեղութիւն կըսեմ...

Հոյս տեսաւ եւ վաճառում են

ԿԱՐԱԳԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ.

ԾՈՑԻ ՍԻ ՊԱՏԻ

1912 Թ.

„ՇԻՐԱԿ“

Պ. Ա. Տ. Կ. Ե. Բ. Ա. Զ. Ա. Բ. Դ.

ՕՐԱՅՈՅՅՆԵՐԸ

◁ XIV տարի ▷

խաւր կառավար. Մինիստրները մինիստրական Պորնուրդ, Կառավարիչ Սինատ, Մինոդ, Պետական Պորնուրդ, Պետական Դուռ: Առողջապահական. —Կրքերի ազդեցութիւնը մարդու կազմածքի և առողջութեան վրայ, ուրախութեան կրքերի ազդեցութիւնը, երակաշարժական երեկոյթներ, պրօֆ. Մեհնիկով, մարդու ծերութեան պատճառները, մաճնի բուժական նշանակութիւնը, «606» և պրօֆ. Էրլիխ: Ատամները և մազերի առողջապահութիւն, Ինչ ենք ուտում մենք, գազարի և մեղրի բուժական յատկութիւնը, Ինչպէս պէտք է սպերը, առողջապահական օրէնքների ժողովածու, առողջապահական կարճ խրատներ, տարբեր կանոններ երկարակեցութեան: Մազնիսական կամք, յոյսի փիլիսոփայութիւնը, ամենից առաջ հաւատ, հոգու անմահութեան փիլիսոփայական ապացոյցներ, հոգին, բարութիւն և շարութիւն, ապագայ մարդը, զպղի շրջապատողները: Գիւղացեացեալ. —Մեղաբուժական մայրերի փոխարինումը, բնական ձագ տալը և արհեստական ձագ վերցնելը, միջոց երկրորդ ձագի դուրս գալու դէմ, ձագի տեղափոխելը փեթակի մէջ, արհեստական ձագ վերցնելը և այլն: Կովերի ծծերը բորբոքումը ծծերի սեմզածքները և խոցերը, դարաղ հիւ, դէմ միջոց: Թռչնապահ. բառ Բէժմէրի, հաւերի տեսակի բնաբուժիչներ, տեղական հաւեր: Սպառողական ընկերութիւններ, նրանց նպատակը և կազմակերպելու միջոցները: Պատմական. —Տրուր ճարտարապետի մահաբանը Կ. Պարսում: Ազգագրական. —Ազգերի բարեխում սովորութիւնները, մտեղների յուղարկութիւնը զանազան կերպերը: Տեսական. —Տնային տնտեսութեան վերաբերեալ կարևոր գիտելիքներ: Հատըտիր մտքերը աֆորիզմներ: Ընթերցանութեան հասուածք. —Բնական աբրուցները, «Լոյսի կուր իււարի դէմ», «Բաղը բաժանողը», «Կինը», «Աղբառ մարդիկ», «Մարդը և կենդանին», «Մոլորու շահեր», «Միտք»: Կեանքի ճրագիրներ. —Գործելու տասնակէկ կանոններ, Կարֆիլիտի տասնարանեան, Կոնֆուցիոսի և Ռօշիլդի ծրագրերը: Ճանապարհորդական. —Երկաթուղիք, շոգենաւեր և պոստային ճանապարհներ: Զարմալիք. —Մոդիկներ, վիճակարան: Երեսներ թիւը 320:

200 ՊԱՏԿԵՐՈՎ ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅ 200 ՊԱՏԿԵՐՈՎ

ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅԻ առաջին երեսների վրայ ապագրում են հայ և օտար հին և նորագոյն հեղինակների և գործիչների պատկերներ, այլև էրը պետական և դպրոցական հիմնարկութիւնները ազատ են պարապմունքից. յարմարութեան համար առանձին նշանակւած են պատի պարապմունքի ժամերը: Տպագրւած են ընտիր մտքեր, աֆորիզմներ, պատմական դէպքերի ժամանակագրութիւն, բանաստեղծական քառուկներ: Երկրորդ երեսների վրայ՝ հայկական աստիքի պատմական բացատրութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երեկոյթների նկարագրութիւններ, բժշկական գիտելիքներ, առողջապահական խորհուրդներ, արհեստների վեռաբերելու կարևոր տեղեկութիւններ, ազգագրական տեղեկութիւններ, դարձալի պատմութիւններ, ձ պատմական նշանաւոր դէպքեր հայ, ռուս և այլ ազգերի կեանքից, վիճակագրական թըլքըր և տեղեկութիւններ, խորհրդակցութիւններ նշանաւոր անձանց, բանաստեղծութիւններ, ոււնանաւորներ, աշուղ-խաղեր, զարմալի անեղօտներ մեծ մարդկանց կեանքից: Գիւղատնտեսական նորութիւններ, խոնարարական ու անային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խորհուրդներ: Ժողովրդական առածներ, երգեր, երգիծարանական հասուածներ, ծիսադաշարժ նոր ստակներ, առածներ և այլն:

Տխտակը պատրաստւած է լիտոգրաֆիայում, ութ գոյնով, եւրոպական յայտնի հրատարակութիւնների նմանութեամբ, յայտնի նկարչի վրձինի գործ չուս պատկեր՝ «Էրեյի արշալոյս», «Կեաք և մահ», «Նոր տարու զիմաւորում» և «Անիի աւերակներ»:

Կն երկնոցիցը 20 կոպ., պատինը 50 կոպ., գումարով գնողներին գեղծ: Վերադր վճարովի պլանդըն երբպէտք է ուղարկեն կանխավճար:

Գրչո՝ Աлександрополь, Типография „ШИРАКЪ“, Караету մԻՆԻԱտԱրիլիսահանից՝ Alexandropie, Karapet Apinian (Caucase). արանցակարնդ ներինօրացոյցների բովանդակութիւնն առանձին թերթով ապագրւած կու-

Նորագոյն նկարներով հսկայական քանակով  
ՍՏԱՅԻԱԾ Է  
Ե. Յ. Ծ Ա Տ Ո Ի Ր Ե Ա Ն Ի  
ՊԱՏԿԵՐՈՎ  
ՈՐՇՈ  
ՊԱՏԿԵՐՈՎ  
որտեղ և վաճառւած է գործարանային գներով:  
Թիֆլիս Դիւրրոյգրատես փողոց:  
50-6





ՅԵՐՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**ՍՍՏՊՈՆ «ԳԻՐԱՆԻՆ»**  
 — Ս. ԲԱԼԷ ԵՆ ԲԵԿ. —  
 Պահեստը Թիֆլիսում, Գալաիկոսկ. պր.  
 — Պահանջեցէք ամենուրեք —  
 52—2

МАГАЗИНЪ  
КОМПОЗИЦИЯ

Тифлисъ, Пушкинскіи пассаж. № 8

громадная  
экономія  
шведскаго компо-  
зиціон. бѣлья  
Носится не менѣе  
двухъ лѣтъ  
Постоянный боль-  
шой выборъ свѣ-  
жаго товара  
**ВОРОТНИКОВЪ,  
МАНИШЕЕЪ И  
МАНЖЕТЪ**  
По фабричнымъ  
цѣнамъ  
Передѣлка въ лю-  
бой фасонъ  
бесплатно



Продаются портняжныя принадле-  
жности, какъ-то пуговицы, подклад-  
ки, мѣль и впрочѣе.  
**ИМѢЕТСЯ ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕ-  
РЕЙНЫЙ ОТДѢЛЪ**

Остерегаитесь поддѣлокъ и подра-  
жаній

Просимъ обратится только Пуш-  
кинскій пассажъ № 8

0—17 (о. ш.) М. А. КАЛТАКЯНЪ

Բ Ժ Ի Ծ Կ

**ՓԱՆՈ ՄԱՆԴԵՆԵԱՆ**

Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌՈՒԿԱՆ,  
ՎԵՆԵՐՈՒԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւն-  
ներ:

Ընդունում է հիւանդներ իր սեփ-  
ական ամեն օր առաւ. 9—12 և երեկ  
6—9. Ելիզաւետեան փող. № 28.


0—42

**ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ**

Տարին վերջանալու վրայ լինելով, խնդրում ենք մեր յարգելի գործակալնե-  
րին, որ ջարհնանեն մաքրել խմբագրութեանս գրասենեակի հետ ունեցած  
հաշիւները, յետ ուղարկելով անդորրագրերի տետրերը եւ փոխարէնը ստա-  
նալ նորերը՝ առաջիկայ տարւայ ըստ անորոշագրութեան համար:



**Первокл. ресторакъ  
„АННОНА“**



„Зданіе Артистическаго Общества“

**Сод. Я. Т. Бондаренко**

Ежедневно отъ 2 час. до 5 час.  
пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный ор-  
кестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць**—Г-жи Сакко и Марія Оландезе и  
баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

**ЗАВТРАКЪ** отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1  
час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60,  
трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская;  
билліарды. Имѣются кабинеты.

Получены Сибирскіе рябчики и устрицы.

52—27



СПЕЦІАЛЬНАЯ МАСТЕРСКАЯ

ЗАГОТОВОКЪ

**О. О. Агабабянца**

Пріемъ заказовъ всевозможн. заготовокъ

ПО УМѢРЕННЫМЪ ЦѢНАМЪ

Исполненіе къ сроку и аккуратно

Тифлисъ, Мухранская ул. № 4.

3—2

— Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է —

Ն Ա Բ-Ի Ո Ս

**ՊԱՅԲԱՐ**

Վ Է Պ

Գրեն է 75 կոպեկ

Գլխավոր պահեստը «Գուտտենբերգ» գրախա-  
նութեան, ուր և դիմում են գումարով գնողները:

10—6





საქართველის  
გაზეთი

საქართველოს  
გაზეთი